




ԱՐԱՅԻՆ ԳԵՂԱՐՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 62

ՈՒՊՏԵՄԲԵՐ 15/28 1912


ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԵՍ ԵՆ
ԵՐԱՆ
ՏՈՒՐՈՒ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ




Երկրորդ տարի † Սեպտեմբեր 15/28 † Թիւ 62

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍՆՋԲԱՆՑ ՎՐԱՑ
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝

(Շար.)

Բ.

Մի՛ կասալեր երբեք ո՛չ Աստուծոյ եւ ոչ սրբոց հետ.
Այդ գոեհիկ հանոյք անառակ երիտասարդաց բո՛ղ:



Մի՛ կասալեր երբեք ո՛չ Աստուծոյ եւ ո՛չ Սրբոց հետ.

Աստուծոյ վրայ միշտ ամենախորին յարգանք խօսելու է: Իւր
անունն սուրբ է եւ սարսափելի. ներեալ չէ նոյն իսկ առանց պատ-
ճառի եւ ընդունայն եւ թեթեւ բաներու համար զանիկայ բերան առնուլ,
ինչ որ յաճախ կը պատահի: «Աստուծոյ անունը, կ'ըսէ իմաստունն, շա-

¹ Տես Թիւ 59, էջ 492:

րունակի փութեանց չըլլայ, փասն զի յայսմ յանցանքի գերծ ախտի չըղաս:» Որպիսի ուրեմն ոճիր չէ զանի հայհոյելու յանդգնելն, ինչպէս որ ամբարիշտն չվախնար զայն ընել, անոր դէմ տրտնջալով, դժոխային անէծքներով զանի ուրանալով, զոր երբեմն անառակներն իրենց համար խաղ մը կ'ընեն, որոնք պարկեշտ մարդկանց պժգանք պատճառելէ զատ ուրիշ բանի չեն ծառայեր: Սուրբ բաներն, և այն ամէնն, որ յատկապէս Աստուծոյ նուիրուած են, նուազ յարգանաց արժանի չեն: Զանոնք խաղ ընել և ծաղրելն, ինքզինք անհունապէս ծաղրելի և արհամարհելի ընել է. անոնց մասին գործուած ծաղրածութիւն և կամ արհամարհանքն, ամբարշտութիւն և սրբապղծութիւններ են, վասն զի անոնք Աստուածութեան վրայ կ'երթան: Տիրոջ դէմ յանցանք գործել է՝ անոր պատկանող բաները անարգել և արհամարհելն: Ծաղրն մոլութեան սիրելի զէնքն է: Անով է որ բարեպաշտութեան յանդուգն անարգիչներն ատոր վրայ յարձակիլ կ'ախորժին: Արդարոյն պարզութիւնը կ'անարգեն, բայց իրենց յաղթանակն ո՛րչափ կարճ պիտի տուէ: Ժամանակը պիտի գայ, և ատիկա իրենց կարծածէն աւելի մօտ է, յորում պիտի նզովեն իրենց կուրութիւնը և յիմարութիւնը, տեսնելով իրենց յաւիտենական վիճակին սարսափելի և յուսահատեցուցիչ և իրենց ծաղուն առարկայ եղած արդարոյն վիճակին խտրը: Իրենց թողունք ուրեմն այդ աղետաբեր հաճոյքը, և լաւ զգուշանանք ատոր մասնակցելէ: Անոնց ծաղրածութիւնները զքօսանք մը ընելն, իրենց պէս յանցաւոր ըլլալ է: Եւ որովհետեւ իրենք ուրիշ նպատակաւ չեն ծաղրեր, եթէ ոչ որպէս զի գովուին, իրենց ակնկալութիւնը ի դերեւ հանենք պաղ և արհամարհիչ լոթութեամբ մը, որ զիրենք ևս լռելու ստիպէ: Անիկա որ սխալ ակնածութեամբ մը կ'արգիլուի իւր արդար սոսկումը ցուցնելէ, Աստուծոյ շահերը վատաբար կը մատնէ. միթէ նուա՞զ նախանձախնդիր պիտի ըլլանք իրեն փառաց համար. ինչ որ մեզմէ ոչ ոք պիտի ըլլար իւր անձին սեփական և կամ իւր ընտանեաց պատուոյ մասին, եթէ մէկը զայն արատաւորել ուզէր: Ինչպէս որ սուրբ Ամփիլոկիոս Իկոնիոյ Եպիսկոպոսն, և Արիոսեանց դէմ ուղղափառ Հաւատոյ մեծ ջատագովն, օր մը ճարտարութեամբ Թէոդոս կայսեր հասկցուց: Յիշեալ Եպիսկոպոսն ցաւօք սրտի կը տեսնէր որ Կայսրը Յիսուսի Բրիստոսի Աստուածութեան այդ թշնամիներուն կը նպաստէր: Թէոդոս իր որդին Արկադիոսը Կայսրութեան ընկեր առած ըլլալով իրեն, սուրբ Եպիսկոպոսն այս պարագայն առիթ առաւ պալատ գալու այն օրն, յորում Կայսրն և իր որդին բոլոր արքունեաց շնորհաւորութիւնները կ'ընդունէին: Կայսրը խորին յարգանքօք ողջունելէն յետոյ, երիտասարդ Արկադիոսին մօտեցաւ, որ Կայսեր քով իւր Գահին վրայ բազմած էր, և մօտեմաբար անոր երեսը իր ձեռքով շոյելով՝ ըսաւ անոր. «Աստուած զիկ պահե, գաւակս:» Բոլոր ներկայք խոովեցան, և Թէոդոս այս բանէն յանձին իւր որդւոյն

իրբեւ իրեն դէմ գործուած նախատինքէ մը վերաւորեալ, հրամայեց որ անպատկառ ծերունին արտաքսեն: Սուրբ Ամփիլոկիոս Կայսեր դառնալով, յարգալից համարձակութեամբ մը ըսաւ իրեն: «Տե՛ր Արթա», զիեզ վշացուցած կ'ըրբան երբ չեն մասուցանէր որդւոյն միեւնոյն յարգանքի, զոր քեզի կը մասուցանեն: Կը կարծե՛ն արդեօք թէ Երկնաւոր Հայրն ալ աստիպեալս չվշահար այն անարգանքէն զոր իրեն կ'ընեն անոնք, որ չեն ուզեր իւր Որդին պաշտել, եւ կը հայցոյեն իրեն դէմ, անոր Աստուածութիւնը ուրանարոյ:» Թէոդոս հասկնալով այն ատեն սուրբ եպիսկոպոսին իմաստութիւնը, աւելի պատուով դիմեց յարգեց, եւ քիչ ժամանակ յետոյ Արիստեանց դէմ խիստ օրէնքներ հրատարակեց: Աշխարհիս մէջ գտնուող եւ Քրիստոնեայ կոչուած ո՛րչափ մարդկանց արդեօք մի եւ նոյն խօսքերն չեն պատշաճիր: Աստուծոյ վերաբերող ամէն բանի մէջ անվրդով եւ անտարբեր, կրակ ու բոց կը ժայթքեն՝ երբ իրենց դպչուի: Թող ամբարշտ մը հաւատոյ ամենասուրբ բաները իրենց ներկայութեան ծաղրէ, մարդկային երկնաւոր մը գիրենք կը պապանձեցնէ, եւ չի երեւո նոյն խօսք կը զուարճանան ալ ատով: Բայց եթէ ծաղրն իւր սուր պաքները անոնց վրայ արձակէ, նոյն խօսք եթէ գիրենք թեթեւ կերպով մ'ալ քերէ, ո՛հ, այն ատեն է որ իրենց բոլոր զգայութիւնն կը վարթնու, իրենց դժգոհութիւնն կը պոռթկայ: Եթէ զԱստուած իրենց անձին պէս սլրած ըլլալին, մըթէ նոյնպէս անոր շահերը չպիտի պաշտպանէին, եթէ զանի իրբեւ իրենց հայրը նկատէին, անոր վատարար անարգութեամբ վառքը չպիտի ջատագովէին արդեօք, խցելով այդ սրբապիղծ ծաղրածուններուն բերանները, երբ կրնան լնել, եւ կամ գոնէ իրենց սոսկումը եւ արհաւմարհանքը ցուցնելով անոնց:

Կրօնաւոր մը երկու երիտասարդ սպայից հետ հասարակաց կառքով մը ճամբարդութիւն կ'ընէր: Ասանք սկսան կրօնքի վերաբերեալ բաներու վրայ խօսիլ: Զանիկայ իրենց ծաղրածութեանց առարկայ ըրին ամէն գիացածնին եւ չգիտցածնին գուրո տալով: Կրօնաւորն, որ, առանց բան մը ըսելու զանոնք մտիկ ըրած էր, իր կարգին խօսքը պատերազմի վերաբերեալ նիւթերու վրայ բերելով, այնպիսի ծիծաղելի եղանակաւ սկսաւ, ընթին եկածը զուրո տալ որ, երիտասարդ սպայներն անոր այդ նիւթերու մասին ունեցած կատարեալ ագիտութիւնը եւ յուսկ նութիւնն ու յանդգնութիւնը տեսնելով, սկսան բարձրաձայն ծիծաղիլ՝ ինզալէն մարելու տափճան: Այն ատեն կրօնաւորն իրենց ըսաւ: «Դո՛ւք ալ ճշդ պիտի խօսեցաք կրօնի վրայ: Եւ ուզեցի ձեզի ցուցնել թէ, մենք չերեք աւելի ծիծաղելի չենք, քան երբ կ'ուզենք ճշտել այնպիսի երեքերու վրայ, որ մեզի չեն պատկանիր, կամ պատահաւորաբար այնպիսի խօսք վրայ, որոնց մասին կարի հարեանցի ծանօթութիւն մը ունենք, վասն զի անոնք ինքեւ անոնց նկատմամբ ճշդիս խօսիչ: Եւ ամենեւն աւելի կրօնի վերաբերեալ քսակում միջն է որ, երբ մարդ իր չգիտցած բաներուն վրայ

կը խօսի. շատ մը սխալներ եւ անմիտ բաներ գրուցելու վստեղին մեջ կը դնէ ինքզինքն:» Այս փոքրիկ խրատաբանութիւնը զանոնք ամչցուց, և ճամբորդութեան մնացած մասը աւելի չըջակեցութեամբ շարունակեցին: Ո՛րչափ գեղեցիկ է Փօքլնէյի սա զգացումը, երբ իւր կենաց դէպի վերջերն կ'ըսէր. Հարիւր տարիներ ապրեցայ, եւ պիտի մեռնեմ այն միսիքա-րութեամբ թե երբեք նաեւ ամենափոքր սոսիալնորիւնն այ ծաղր չըլի:» «Մարդիկ, կ'ըսէ Ապաշի, անոր համար անհաւատ եմ, փասն զի կ'ուզեն անհաւատ ըլլալ. եւ անոր համար կ'ուզեն անհաւատ ըլլալ, քանզի իրենց կրից շահն այնպէս կը պահանջէ:» Կրօնքն չկրնար այդպիսի զեղծեալ բա-րուց հետ միարանիլ. անոր սպառնալիքն ամէն անարժան և մեղանշա-կան հաճոյքները կը դառնացնեն և կը թունաւորեն: Հարկ է կամ թո-ղուլ լքանել սիրելի դարձած կրքերը, և կամ անդադար կրել խղճին խռովիչ խալթերը. և որովհետեւ շատ ծանր կուգայ գոհել ինչ որ սի-րելի է, և միւս կողմանէ մարդս չկարենալով հանդարտիլ, եթէ ոչ վրո-դովիչ ճշմարտութեանց վրայ տարակուսելով, ուստի կ'որոշէ բանի մը չհաւատալ, կամ գոնէ ամէն բանի վրայ տարակուսիլ: Ի զո՛ւր ինք-զինք ապահովցնել կը ճգնի. միտքն և խիղճն միշտ կը բողբոքեն այդ-պիսի վատթար և անմիտ գործելու եղանակին դէմ, և ամենայանդու պն անհաւատութիւնն իսկ չկրնար երբեք ատոնց ամէն ձայները խեղդելու յաջողիլ: Վասն որոյ հազուադէպ չէ, տեսնել ամէնէն աւելի անբան-ներն անգամ, իրենց մահուան ատեն յետս կոչել այն սրբապիղծ ծաղ-րածութիւնները, զոր իրենց առողջութեան ժամանակ ըրած էին: Մե-ղըրե՛, Գաղղիոյ պատմագիրն, իւր կենաց ամբողջ ընթացքին մէջ պիւ-րոնականութեան ձեւեր առած էր, որ աւելի իր բերնին, քան թէ իր սրտին մէջ էր: Իւր վերջին հիւանդութեան ատեն կանչել տուաւ իւր այն բարեկամները, որոնք իրեն կրօնքի մասին ըրած անառակ խօսակ-ցութեանց սովորական վկաներն եղած էին, և անոնց աղաչեց որպէս զի իր երբեմն ըսածները մոռնան, և յիշեն թէ աւելի հաւատալու են հո-գեւարք, քան թէ առողջ Մեղըրեի:

Այդ գրեթէի հաճոյքը անառակ երիտասարդաց քո՛ղ.

Երիտասարդ զինուորական մը, որ առաքինական կրթութիւն մը առած էր, ուրիշ սպաներու հետ կը ճաչէր. ասոնք սկսան սուրբ և կրօնքի վերաբերեալ բաներու վրայ ամբարշտաբար խօսիլ: Այդօրինակ խօսքեր լսելով զգացած ցաւը քիչ մը ատեն ծածկեց. բայց խորհելով որ մարդկային ակնաձութիւնն պէտք չէր որ յաղթանակէր այն նուիրական պարտքին, զոր ինքն ունէր իւր կրօնքին և խղճին հանդէպ, և թէ միւս կողմանէ կրնար համարձակաբար խօսիլ այնպիսի անձանց հետ, որ աստիճանաւ իրմէ վեր չէին, անոնց խօսքը քաղաքավարու-թեամբ ընդմիջելով, ըսաւ անոնց. «Պարոններ, եթէ ձեր ներկայութեան վեհապետին եւ Տեոքրեսեան շահուց եւ կամ ձեր ընտանեաց դէմ խօսուե՛ր,

կարծեմ թէ այդպիսի խօսքեր ընող դասարկարանը պիտի շնորհակալ լինի. ձեզի յոռիքիս հրամայեցի չափ իշխանութիւն չունիմ. բաւական ազատութիւն ունիմ ձեռքի ընելու թէ. եւս առաւել պարտական եմ Աստուծոյ նկատմամբ:» Երիտասարդ սպային խօսքերն, որուն առաքինութիւնը կը յարգէին, խօսակցութեան նիւթը փոխել տուին: Սկսան անմիջապէս տարփական իրաց և իրենց սիրային հնարից վրայ խօսելու, զանոնք ամենալկաթի խորհրդածութիւններով և կատակներով համեմելով: Երիտասարդ սպայն մտածելով որ չէր կրնար այլեւս անոնց հետ մնալ, ոտք ելաւ մեկնելու համար: «Ուր կ'երթաս,» ըսին իրեն. «Պարոններ, ըսաւ, կ'երթամ ձեր ծառայից հետ նստելու. վասն զի ապահով եմ թէ, անոնք ձեզի պէս այդ տեսակ ազատ եւ ցոյի խօսքեր չպիտի ընեն:» «Պարոն, ըսին իրեն, մեր խօսքերն զեզ վշտացնելու չեն աւելնելիս. վասն զի ժամանակ անցընելու, կատակելու եւ ծիծաղելու համար միայն այդ խօսքերը կ'ընենք: Բայց Պարոններ, կրննեք երիտասարդ սպայն, կը վայրէ՛ք քարեկիրք անձանց, որոնք պէտք է որ ազնիւ զգացումներ ունենան, իրենց ժամանակը այնպիսի աստիճան եւ անօրայի կատարանութիւններով անցնել: Իսկ սուսիս. կը պարտաւորեմ ձեզի խոստովանել թէ, չեմ կրնար ծիծաղել այնպիսի կատարանութեանց վրայ, որ պատշաճօր մարդը անօրէն կը կարմրեցնեն:» Ներկաներէն ոմանք այդ երիտասարդին իրաւունք տուին, և խօսակցութեան նիւթը փոխեցին: Երբ կը զգաս թէ խօսելու համար բաւական համարձակութիւն և քաջութիւն չունիս, և եթէ վախնաս թէ, փոխանակ ամենալու և դարձի բերելու այդ յանդուգն մարդիկը, անոնք եւս աւելել զայնակողիցս հոն գտնուողները, և բարեպաշտութիւնն ու առաքինութիւնը ծիծաղելի չընեն, լռէ՛. բայց երեսդ խօսել տուր: Քու աչացդ մէջ և ճակատիդ վրայ ցուցուր անոնց այն սոսկումն ու տխրութիւն, որովք դուն կը զգածուիս, երբ անոնք անամօթարար կը յանդգնին դուրս տալ իրենց սրտին մէջ ծածկուած ամէն աղանդութիւն և ապականութիւն: Բառ մը մի՛ գրուցեր. բայց տխուր կեցի՛ր. այդ տեսակ կշտամբանքն յաճախ աւելի ազդեցութիւն կ'ընեն, քան թէ անխորհուրդ նախանձախնդրութեան մը դառնութիւնն ու զայրոյթը. չկայ մարդ մը, որ չկարենայ և պարտաւոր չըլլայ ասիկայ ընելու: Ամբարիշտ և խառնագոնաց մարդկանց հետ, որոնք կրօնքի և սուրբ բաներու վրայ կը խօսին, միայն ծաղրելու համար զանոնք, սովորաբար կարճ և ընդհանուր պատասխանով մը գոհացիր, որ խնդիրը լուծէ, և կամ նորին հեզութեամբ մը, որ ծիծաղը անհամ ծաղրածութիւն վրայ դարձնէ: Այսօրինակ պատասխան մը առաջքը կ'առնուէր երկայն վիճաբանութեանց, կամ զանոնք կը խափանէ, և երբեմն առիթներ կը ներկայանան, յորս աւելի լաւ է վիճաբանութեան չմտնել, նոյն իսկ ընդդիմախօսէն աւելի գերազանց զէնքեր ալ ունենալով: Հնար է յաճախ, ամէն ինչ, ինչ որ արկութեանց պատասխանել ուզելով, գայթակղե-

ցընել և իրենց հաւատքին մէջ զբոլեցնել տկար հոգիները, որոնց մասին պէտք է զգուշանալ: Գրեթէ միշտ հաւատքի մասին եղած վիճարանութիւններն աւելի չարիք քան թէ բարիք յառաջ բերած են: Բազմաթիւ ընկերութեան մը մէջ, պարտուած ամբարիշտն իւր պարտութիւնը խոստովանելու կ'ամէնայ, և, զայն լուս եւս ծածկելու համար, յաղթանակողի հովեր պիտի առնէր, որով ուրիշներուն վրայ պիտի ազդէր: Ուստի հետք է, այդպիսի պարագայից մէջ, իրեն յարձակումներուն կտրեւորութիւն չապ, և անոր իւր սխալը կամ անխօս հուրք գործը ցուցնելէն ետեւ, դո՛ւ լլլալ իւր յանգիւնութեան հանդէպ արդար արհամարհանք մը արտայայտելով: Նոյն խոստանձնական վիճարանութիւններն, եթէ ուղիղ դիտաւորութեամբ և լուսաւորուելու անկեղծ փափաքով մը չեն լլլար, շատ հազուադէպ է որ բարի ելք մը ունենան: Ասանք սոսկալի ամբարշտութիւններ բռնու և կամ լսելու հարկի մէջ կը դնեն: Ուստի աւելի լուս է այդպիսի վիճարանութիւններէ խոյս տալ, ինչպէս առթիւ մը մէջ գիտուն Աստուածաբան մը բարաւ: Աշխարհիկ անձ մը ուզելով անոր հետ կրօնքի վրայ խօսիլ, աւելի վիճարանելու հաճոյքին, քան թէ լուսաւորուելու և հրահանգուելու համար, և թերեւս իր խղճին խալթերը խղղելու նոր պատրուակ մը ունենալու փափաքով, Աստուածաբանն համեմատութեամբ իրեն պատատւ խանդ: «Եւ այս նիւթերուն վրայ ինծի չափ ուսումնիք ընել, կ'ընեմ այն ասեմ ի միտսիս խօսիլ ասոց վրայ: Միկնել այն ասեմ աւելի շուտ և ուսումնիք ան հաւատ, և որպէս զի վրայ ունեցած հաւատումս յիշուցնեմ, որից նիւթերու վրայ խօսիմ:» Սակայն, ինչ որ ալ լլլայ, հաւատարմ չէ թէ, միշտ անկեղծութեամբ է որ կրօնքը դէմ կը խօսուի, և յիշուի, ո՞վ չգիտեր թէ, երբ մահը կը մօտենայ, մեր ամէնէն կատաղի անհաւատներն կրօնքը տարբեր աչքով մը կը տեսնեն, քան թէ իրենց աւուղջութեան ժամանակ:

Երբ մարդ ինքզինք մահուան մօտ կը տեսնէ, կ'ըսէ հեթանոս հեղինակ մը, այն ատեն է որ կը յիշէ թէ աստուածներ կան, և թէ ինքն մարդ է: Եթէ իւր յաջողութեան պայծառութեան մէջ, և կամ իւր առողջութեան զօրութեան ժամանակ զանի մոռցած կը թուէր, այն ատեն է որ իւր բոլոր տկարութիւնը և կախումը աւելի կ'զգայ: Մահուան առաջին նշանին ամէնէն անհաւատն իւր աչքերը դէպ ի երկինք կը վերցնէ. կը դողայ այն հանդերձակին վրայ, զոր ինքն սոցնալի արհամարհել պանծացած էր, և որուն վրայ թերեւս յաճախ կատակած էր. կը զարհուրի յաւիտենականութենէ մը, որուն դուռներն կ'սկիւն բաց ուիլ, և անոր բոլոր խտաւթիւնը իրեն նշմարել կուտան արդէն. այն ատեն իւր Հօր և իւր գոյութեան Հիւրիակին գիրկը կը նետուի: Երանի է իրեն եթէ տպալխարութեան արցունքներ թափէ, որոնք կարեւորն իւր հայտնութիւնները ջնջել:

Անոնք որ այդ սարսափելի վայրկեանին յորում իրենց յաւիտենական վիճակն պիտի որոշուի, անկրօնութիւնը՝ մինչեւ ամենայարգելի բաները տակաւին ծաղրել ուղեղու կը տանին, իրենց ամբարշտութեան և յիմարութեան չափը կը լեցնեն, և իրենք զիրենք յետին անօրէնութեամբ և զարշուծեամբ կը ծածկեն:

(Շար.)

Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵՍՆ

ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Արձագանցի ընթերցողներուն մեր նախորդ թիւերուն մէջ քանի մը անգամ աւետուած էր թէ ի՞նչ աննախընթաց շքեղութեամբ տեղի պիտի ունենար Վիեննայի մէջ Ս. Հաղորդութեան Համազգային Համաժողովը, նոյնինքն ծերունազարդ Աւստրիոյ-Հունգարիոյ թագաւոր-Կայսեր նախածնունդութեամբ: Այսօր ահա, ի գլուխ ելած է սոյն դէպքը՝ որու համար բոլոր Եւրոպեան և Ամերիկեան թերթերը ամբողջ էջեր նուիրեցին մեծ խանդավառութեամբ: Միայն մեր թերթերն են՝ որ չուղեցին արձանագրել զայս իրենց էջերուն մէջ, և կամ սոսկ իրր պարզ լուր մը զայն հաղորդեցին կրենց ընթերցողներուն:

Պատճառը ակներեւ է:

Հաւատքի մէջ ուժացումը, բողոքական, անկրօն, ընկերվարական, Մասնական սկզբունքներու ծաւալումը այնքան հիմնովին խեղաթիւրած են դժբախդաբար միտքերը՝ որոնք դժուարաւ կ'ըմբռնեն կարեւորութիւնը սոյն Համաժողովներուն:

Մինչ չկայ իր կրօնքին քիչ թէ չատ գիտակ եղող Կաթողիկէ մը՝ որ չըմբռնէ թէ Ս. Հաղորդութեան խորհուրդը հոգին է Քրիստոնէական Ս. Կրօնին, և թէ՛ անոր ջերմեռանդութիւնը միակ միջոցն է որով կարելի է անդ թումբ մը կանգնել դարուս սկեպտիկ և անկրօն ոգւոյն ծաւալման և աւերներուն հանդէպ:

Ի՞նչ գեղեցիկ համայնապատկեր, տեսնել քաղաքական ու տնտեսական շահերով իրարու հակառակ ժողովուրդներ, տարբեր ծագումով, լեզուներով սովորոյթներով ազգեր և անհատներ՝ որոնք ա՛յնքան սիրալիր խուռներամ կը գիմեն ու կը հաւաքուին Կաթողիկէ դրօշին ներքեւ տօնելու Ս. Հաղորդութեան սոյն Համաժողովը: Եւ ահա Ս. Եկեղեցւոյն ներշնչող և առաջնորդ եղող Ոգին է՝ որ գիտէ ա՛յնպիսի ասեմներ մը ճիշդ ընտրել Կրօնքը փառաւորելու միջոցները, որ ասեմ անոր ռիսերիմ թշնամիներով ապահոված կը կարծէին յաղթութեան դափնին խլելու:

Վրեննայի Համաժողովը Եկեղեցական Պատմութեան վերաբերող այն մեծ դէպքերէն մին է՝ որու յիշատակը երկար ատեն անջնջելի պիտի մնայ։ Կոթող մըն է ան միեւնոյն ատեն՝ որ պիտի ապացուցանէ ոչխարի թէ Կաթողիկէ հաւատքը կենդանի է դեռ, և թէ՛ պիտի տեսնան մինչեւ որ տեսնէ իր բոլոր թշնամիներուն յաջորդաբար նուազելն ու անհատիլը։

Մինք չենք կրնար անտարբեր մնալ այսպիսի նշանաւոր դէպքի մը առջեւ, և կամ բաւականա՞նալ սոսկ հակիրճ յիշատակութիւն մը ընելով։ Մեր ընթերցողներն անդամ չպիտի ներէին մեզի նման ընթացք մը։ Ուստի, որոշած ենք այս և յաջորդ թիւերուն մէջ երկարօրէն յառաջ բերել Վրեննայի սոյն Համաժողովին ամբողջ գործառնութիւնները իրենց բոլոր կարեւոր մանրամասնութիւններով՝ քաղելով վայնս պաշտօնական աղբիւրներէ։ Այդպէս լրած էինք նաեւ տնցեալ տարուայ Մատարիտի Համաժողովին համար Արձագանգի Ս. տարուան թիւերուն մէջ։ Այս անգամ թանկագին յիշատակարան մը պիտի մնայ նաեւ մեր ապագայ սերունդին եւս, երբ ժամանակները փոխուելով, օր մը հետադիւրբութիւն ուզէ ան իր անցեալի փառքերովը։

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՆԱԽՕՐԵԱԿԸ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Սեպտեմբեր 9ին [Ն. Տ.] կը համէր պատուիրակը, Վսեմափայլ Կարդինալ Վան Բօսսուս, իր հետեւորդներով Բօնիֆէլի Կայարանը՝ ուր դիմաւորելու փութացած էր Համաժողովին հիւրընկալ Յանձնախումբը Երօսլաւ Թէօն Կոմսի նախագահութեամբ։

Կոմս Թէօն հակիրճ ուղերձով մը բացատրեց Վսեմ. Կարդինային թէ ինչպիսի որդիական մեծարանօք ու ջիւղ սիրով ստգորուած էր ինք ու Աւստրիոյ-Հունգարիոյ բոլոր Կաթողիկէներու զգացմանց թարգման եղող Յանձնախումբը, Ս. Քահանայապետին հանդէպ։

Կարդինալը զգածամբ շնորհակալ եղաւ իրեն եղած այս փառաւոր ու անկեղծ ընդունելութեան համար, և յարեց լսելով թէ, այն պահուն երբ ինք ոտք կը դնէր Կայսերական հողուն վրայ, իր առաջին յարգալից ողջոյնը կը պարտէր Ն. Վ. Կայսեր, յետոյ Կոմս Թէօնի և Յանձնախումբին եւս քաղաքական խօսքեր մը ուղղելէ վերջ՝ առաջնորդուեցաւ Կայսերական յատուկ կառավարման, ուր Պատուիրակը իր հետեւորդներով պիտի ընթերէր ու գիշերէր։

Բօնիֆէլի Կայարանը Քահանայապետական ու Կայսերական դրօշներով զարդարուած էր համակ։

Կայսերական կառավարման երկու գորաւոր վարչապետներ ունէր, ու պիտի կառավարուէր երկաթուղիներու ընկերութեան ամէնէն բարձր պաշտօնեայէն։ Ծղգրիտ ու խիստ հրամաններ արուած էին՝ որպէս զի

առանց ո՛ր և է յապաղման կատարուէր ուղեւորութիւնը մինչև Վիեննա : Առտուան ժամը ճիշն կայսերական կառախումբը ճամբայ կ'ելնէր արդէն :

Տասը ժամ շարունակ կառախումբը սուբալէ վերջ, ժամը ճիշդ Յին յ. մ. կը հասնէր Ռէքավինքէլ՝ ուր կ'սկսի Վիեննայի Արքեպիսկոպոսական թեմին սահմանը : Փոքրիկ կայարանը համակ դրօշազարդուած էր ու ծաղկալից դրախտի վերածուած : Ահագին բաղմութիւն մը խելայեղ ծափերովը կը խղզէր կրեին վայրաշարժներուն ցնծալից սոյլերը :

Հոն կ'սպասէին Վիեննայի Արքեպիսկոպոսական օգնականներէն Մօնս. Փֆլուկէր [որ դրութան և նենգաւոր ֆրանմասն սրկայէն իր ստացած վերքերէն դեռ նոր ապաքինած էր] և Մօնս. Չիօքքէ [Tschokke] թեմական Ընդհ. Քարտուղարութեան Դիւանէն՝ է. Միւլլէր, Կոմս Ֆ. Վալդէսթրիսէն և թեմական ժողովի նախագահ Պարօն Վիլիլհոֆ — Շէլլ :

Սոյն Պատուիրակութիւնը բարի գալուստ մաղթելով յանուն Վիեննայի Կարդինալ — Արքեպիսկոպոսին. Քահանայապետական Պատուիրակը անոնց շնորհակալ ըլլալէ վերջ իր կառախումբը հրաւիրեց զանոնք, և խօսիչն ճամբայ ելան դէպի Վիեննա :

Կայսերական կառախումբը ժամը 3,50ին կը հասնէր Վիեննա՝ Ռէտուպանհոֆի կայարանը :

Յանուն Կայսեր ընդ առաջ եկած էր Կոմս Գզէանիմ :

Կայարանին շուրջը խումբ խումբ կ'սպասէին դպրոցական երկսեռ փոքրիկ տղաք, և շատ մը Ընկերակցութիւններ՝ իրենց ուրոյն դրօշներով :

Վսեմ. Քահանայապետական Պատուիրակը իրեն համար յատկապէս դրկուած պալատական շքեղ կառքը նստելով, իր հետեւորդներով նկատ յառաջանալ բաղմութեան խելայեղ ծափերուն մէջ :

Քէթլնէրշթրասսէի ծայրը՝ ուր կ'սկսի Կայսերական Օրէրայի հրապարակը, Ն. Վսեմութիւնն ողջունելու համար կեցած էին Վիեննայի Կարդ. — Արքեպիսկոպոսը Վսեմ. Նակկ, և Քաղաքապետը անձամբ :

Վիեննայի Կարդ. Արքեպիսկոպոսը հետեւեալ բանախօսութիւնն րբու Քահանայապետական Պատուիրակին.

Վսեմաշումք Տէր,

Սուրբ ուրախութիւն մը կ'ողողէ այսօր իմ սիրտս. ինչու որ պիտի կարենամ ընդունիլ Ձեր Վսեմ. Տէրութիւնը այս կայսերականիս մայրս փառաբան ի Վիեննա, եւ յարգութեամբ յարի գալուստ մաղթել յանուն իմ սիրելի կղերիս, յանուն իմ հաւատարիմ ժողովուրդիս անոր՝ որ հոս կու գայ ի դիմաց մեր Սրբազան Հօր :

Որքան խոր արեւսացած է մեր արեւուն մէջ հաւմուր ֆրիսնէնտքեան հաւատարի կօր հանդէպ մեր սաժած սերը, նոյնքան աչ անկեղծ է սցն ողջոյնը զոր այսօր կը նուիրենք մեմք մեր հաւատարի կօր Պատուիրակին :

Այս պահուս Արեւիսկոպոսական Թեմիս Եկեղեցիներու զանգակներուն զօղակները կ'աւետեն հաւատացեալներուն թէ ինչ հասած է Զ. Վ. իբր Պատրիարկ Քահանայապետին՝ նախագահելու համար Վիեննայի մէջ յսկումն Սրբ. Հօր, Հաղորդութեան Միջազգային Համաժողովին։ Այս զանկներ կու գայ Տիրոջ սաճարէն, ուր կը բնակի Սրբոքիս Սրբոցը, եւ դէպի Ս. Հաղորդութեան Քահանայապետին կ'ողորէ ամենուն մտածումը, եւ ուր ուրախութեան, շնորհակալութեան ու սիրոյ արցունքներ քալելը պիտի տայ ամենուն այտէն։

Մենք սակայն, մասնաւոր հաճոյքով մը կ'ողորենենք Զեր Վսեմութիւնը այս Կայսերանիս Մայրաքաղաքիս մէջ, ինչու որ Զ. Վ. զարդն է այն Կարգին՝ որ Վիեննայի տուաւ նոր ժամանակներու առաջնաւոր, եւ Աստուծոյ օգնութեամբ, խորաններուն աջ՝ նոր մէկ Սուրբ մը, Ս. Կղեմէս Մարիամ Հօծպաւեր։

Ի՜նչ յկայ հարիւր տարի, երբ հաւաստիք ժայռաստիճան սկսեցաւ պահուիլ, յեղափոխութեան եւ պատերազմներու հետեւանօք, ան՝ մասնաւոր ընկելով Գոհութեան Խորհուրդը, եւ քաջալերելով Ս. Հաղորդութեան մերձեցումը, նոր արիւն մը ներարկեց երեսասարդութեան ու կրօնական կենաց վերադարձոյ Դերման ժողովուրդը։

Բարի գալուստ կը մտաշնորհաբար ուրեմն Զեր Վսեմութեան, իբր եղբայր նկատելով զԶեզ մեր այս Վիեննայի Սուրբին, Զեզ՝ որ քրիստոնէական կենաց միջոց տուող մըն է՝ Ս. Հաղորդութեան միջոցաւ. ծերերուն ու երիտասարդներուն հոյ, հեռաւորներուն ու մօտաւորներուն հոյ։ Զեր Վսեմութեան օրհնաբաշխ ձեռքն ու աղօթքի թող օրհնութեամբ եւ հաւաստով զօրացնեն մեր ժամանակներն ալ, Ամեն. (Շար.)

ՄԱՐԴՈՒԹԵԱՆ ՓԱՌՔԵՐԸ

ԵՂԻՍԱՔԵՐ ՍԻԴԸՆ


Գ.

Մանկամարդ այրին թէպէտ անմիջեմ իւր ցաւոյ եւ տուգին մէջ՝ չփակեր իւր միտքն ու սիրտ երկնից ազդեցութիւններուն. կորուսած իւր նեցուկն աշխարհի մէջ՝ կը գնէ իւր բովանդակ յոյսն ու վստահութիւն Ստուծոյ վրայ, որ մասնաւոր գուրդ եւ կարեկցութիւն կը ցուցնէ յաւէտ վշտակիր հոգիներուն։ Ֆիլիքզի ընտանեաց հետ կ'երթայ նա ի Փլորենտինա, ուր կաթողիկէ ներշնչմանց հրաշակերտներ կը յափշտակեն զայն հիացմամբ, եւ ամենէն լուրջ ու գերբնական մտածութեանց

աղբիւր մը կը լինին նմա : Ի մասնաւորի Անուեցիադոյի հոյակապ և ճու-
խաղարդ եկեղեցւոյն մէջ Աստուածամօր սքանչելագործ պատկերին
առջև խորապէս կը յուզուի : Պատարագի վեհագոյն խորհուրդը պատ-
կառանք կը ներշնչէ իրեն , Իտալիոյ կղերին և ժողովրդոց բարձր և հա-
մուգեալ բարեպաշտութենէն կը շինուի մեծապէս , և կրօնական ճշմար-
տութեանց գերազոյն հարցն սակաւ առ սակաւ կը գրաւէ իւր անկեղծ
ուշադրութիւն : Ներքին ու արտաքին վիշտերու բեռին տակ կ'ըսէ՝
նոր և գուցէ աւելի անհնարին տառապանքի , անպատում մարտիրոսու-
թեան մը հեռանկարին առջև չուզեր ընկրկիլ իւր մեծանձն ու արիա-
շունչ հոգին : Կաթուղիկէ Կրօնի մէջ , և Կաթուղիկէ սրբավայրերու
մէջ , — որք աննիւթ կրօնի տեսանելի պատկերացումն են մշտախօս , —
ամեն ինչ կ'զմայլեցնէ , կը յափշտակէ զայն : Բանաստեղծութիւն , երա-
ժշտութիւն , քանդակագործութիւն , ճարտարապետութիւն և նկար-
չութիւն , ահա՛ բովանդակ հանճարն իսկ մարդոյն , որ ի ծո՛ւնր Արար-
չին առջև կը փառաւորէ զայն պերճախօս և խորհրդաւոր ձայնիւ , իրմէ
ընդունած պարգեւներն իրեն կը նուիրէ ռոնարհ յարգանքօք , ճշմարիտ
երախտագիտութեամբ , և մշտամրմուռ յարող և հրաւէր կը լինի բա-
նաւոր արարածոց՝ սիրելու և պաշտելու առ յաւէտ Զեռքն արարչա-
վործ : Անոնք որ տեսած են գեղարուեստից գասական երկիրն՝ Իտա-
լիա , և անոնք որ ունեցած են իրենց մէջ սիրա մ'զգայուն , կրնան
երեւակայել գէթ մասամբ թէ ի՞նչ բեղմնաւոր և վսեմ մտածութիւնք
միմեանց կը յաջորդէին Եղիսաբեթ Սիդընի նման անկեղծ , ազնուա-
տենչ , նրբաճաշակ , ճշմարտասոյզ և խորապէս կրօնասէր հոգւոյ մը
մէջ : Կարելի՞ էր որ կրօնքներու ամենէն գեղեցիկն ու ներդաշնակ ,
ամենէն սրտաշարմն ու սխրալին , ամենէն սրբաշունչն ու հանճարալիր ,
ամենէն հոգեցոյցն և երկնաթռիչ՝ լինէր ամենէն բազմավրէպն ու դա-
տապարտելին :

Արդարեւ անողոր տրամաբանութիւնը կը գոչէր նմա ուժգին և
կ'ոտէր . « Եթէ բողոքականութիւն է ճշմարիտ , կաթողիկէութիւն ո՛չ
միայն մոլորութիւն , այլ և ապականութիւն և կռապաշտութիւն է : »
Պատարագի Զոհն և Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդն եւեթ —
եթէ չեն բացարձակ և անվրէպ ճշմարտութիւն — կաթողիկէ կրօնքն
իսպառ վարկարեկ կ'ընեն , և բոլոր հին ու նոր աղանդներու տխուր
չարքին մէջ ամենէն ստորին տեղ մը կը նշանակեն նմա : Եւ սակայն
նոյն այդ կրօնքն է — կռապաշտական ըստ նորադանդից — որ տուած
է տիեզերքի ո՛չ միայն երկնազդեցիկ հանճարներ (բաւ է յիշել Ս . Թով-
մաս Սգուլինացին ու Յովա Անճէլիգօն) , ո՛չ միայն Գեղարուեստից
գլուխ-գործոյցներ (ամեն սեռէ և անվերջ թուով) , այլ և մարդկու-
թեան մեծագոյն բարեբարներն ու բարոյականի ամենէն վսեմ գիւ-
ցազները : Կարելի՞ է որ Աստուծոյ փառաց տեսչովն վառուած , Յիսուսի

սիրով բորբոքած, կուսավայլ մաքրութեան զենիթն հասած հոգիներ, փրօնկիսկոս և Դլարա Ասիւղայիներ, Բեռնարդինոս և Կատարինէ Սե- նայիներ, Բոնավէնդուրա, Կայեղանոս, Հերոնիմա Էմիլիան, Յովսէփ Գաբէրէլեան, Ալփանոս սը Լիկուսի, Պօլոս Խաչեան, Մարիամ Մաղտաղինէ Բացեան, Մարգարիտա Գորգոնացի, և այլք անթիւք — Իտալացիներն եւեթ յիշելով —, կարելի՞ է որ սոյնպիսի չքնաղ, վսեմ, դերմարդկային հոգիներ ծնունդ լինէին անարգ ու խեղաթիւը կրօնի մը... Ի՞նչ որ կրնայ ի մարդն պարկեշտ ու ողջամիտ՝ կը բողոքէ սառու- կապէս այս անհեղեղութեան, սոյն հրէշային հնթադրութեան դէմ: Եթէ մարդկային միտքն իւր բովանդակ ոյժով չ'ապստամբէր սոյնօրի- նակ զգլխիչ եղրակացութեան մը դէմ, այլեւս տրամաբանութիւն և հոգեւանութիւն, բարոյական և առաքինութիւն անամէջ և խաբուսիկ բառեր պիտի լինէին եւեթ, և հարկ էր մարդկային էակէն յուսանա- տիլ ի սպառ, և դադրիլ կոչելէ զայն բանաւոր և իմացական էակ: Բարեւոյ ու չարի հիմնական չփոթութեամբ այլեւս անհնար պիտի լինէր պատասխանատու նկատել զայն, և պատժոյ ու վարձատրութեան ծա- նօթութիւնքն իսկ՝ յայնապէս անիրաւ՝ բռնաւորական բարքերու և դարերու սգատխուր մնացորդներ միայն պիտի համարուէին: ՀԵՐՄՍՆ



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ռ Ո Վ Ս

Վերջին օրերս կը շարունակուին այլեւայլ երկիրներէ բազմաթիւ ուխտաւորներ գալ ի Հռոմ, առ ոտս Ս. Փահանայապետին՝ Պէճիգայի Ալոթի գաւառէն եկան չորս հարիւր ուխտաւորներ՝ իրենց Աւագերէց Ռէօլանացի առաջնորդութեամբ: Գեղեցիկ ճառախօսու- թեամբ մը հաւատեցին իրենց սիրոյ, յարգանաց ու յարումի զգացումներն առ Փոխու- նորդն Քրիստոսի, ու կրկնեցին իրենց հիւս և անկոպտ հնազանդութեան հաւատօրէնքը: Հայրական պատասխանով մը յորդոր կարգաց Ն. Սրբութիւնը որպէսզի շարունակեն իրենց այս բարի տրամադրութիւններուն մէջ որոնցմով միայն Քրիստոսի աշակերտ և Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ ճշմարիտ գաւառներ կրնան ըլլալ: Իտալիոյ այլեւայլ թեմերէն հաւաքուած էին նաեւ հազարէն աւելի բարեպաշտ ուխտաւորներ, որոնք նմանապէս արժանացան հայ- րական ունկնդրութեան և խրատուց և Առաքելական օրհնութեան:

Գաղղիոյ Լիոն քաղաքին Արքեպիսկոպոս՝ Վսեմ. Կարդինալ Գուլիէ վախճանեցաւ ամսոյս 11ին: Երանաւոր հիւանդը բնաւ չկորոյս մտքի կորուստ ու խաղաղութիւնը. եկե- ղեցւոյ վերջին խորհուրդներն ընդունեցաւ ամենայն համակրանքով եւ հանգարտու- թեամբ: Հոգեվարքի ազօթքներուն ցած ձայնով կը հետեւէլ, խաղաղօրէն մարեցաւ և ա-ւանդեց իր հոգին:

Ծնած էր ի 14 Մարտի 1829, և քահանայացաւ ի Բարիլ՝ Սէն Սիւլլիսի մէջ, ի 1854: Իսկ 1876ին Օրլէանու Օգնական Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, և երբ Արհի. Տիւբաւորու, հաշակաւորն, կը չուէր յաշխարհէ, իրեն կը յաջորդէր Գուլիէ ի 1878: Այս աթոռին վրայ պահեց վեհ արժանապատուութիւն մը կառավարութեան հանդէպ, երբեք ուշքի առջեւէն չկորսնցնելով Եպիսկոպոսի ընկերական ու կրօնական պարտքերը: Լիոնի արքեպիսկոպոսու- թեան բարձրացաւ ի 1893 երբ վախճանած էր Կարդ. Ֆուլոն: Հազիւ Աթոռին տէր եղած, ստիպուեցաւ մաքառիլ կառավարական ոտնձգութեան դէմ՝ եկեղեցական ստացուածոց ու եկամտից մատակարարութեան մէջ: Արհի. Գուլիէ ընդգրկմացաւ ամէն կորովով, նոյնպէս ըզգրկմանալու խախուսեց իր ժողովուրդը. Գաղիմիր — Բէրիէի նախարարութիւնը կտրեց

իր տարեկան թոշակը: Արքեպիսկոպոսը այս առթիւ գեղեցիկ խմատաղից խօսք մ'ունեցաւ: Իր բարեկամները դիտել կուտային որ այսպէսով իր գլխէն իսպառ կը հեռացնէր կարգի- նալական գտակը, քանի որ կառավարութիւնը բնաւ պիտի չհաւանէր առ այդ: «Ի՛նչ հագ- ըսաւ, տսիկս պիտի չարգելու որ մտնեմ արքայութիւն, ուր մարդ կը մտնէ գլխարկը հա- նած»: Դեռ շատ բաներ քաշեց, ամենուն զարմանքը գրգռելով իր քաղցրարարութեան և միանգամայն առաքելական եռանդեան վրայ: 1897ին կարգինալ եղաւ:

1910. Յունուար 7ին, Ս. Քահանայապետ Պիոս Ժ. կը զրէր առ Կարգինալ Գուլիէ. «Գաղղիոյ եկեղեցւոյն ներկայ պարագաները բացարձակապէս կը պահանջեն բարի հովիւներ՝ ձեզ նման. երանի՜ թէ կարենայիք ընդ երկուր ապրիլ, և դեռ ընդ երկար ձեր հասաու- տամտութեան ու ձեր խոհեմութեան լուսաւոր օրինակները տալ ամենուն: Այս է ահա Մեր ամենասիրելի փափաքը, այս է Մեր աղօթքն ու մաղթանքը որուն լսելի ըլլալը կը հայցենք Աստուծմէ»: Եւ յիշաւ, անհետացող այս բարձր անձնաւորութիւնը, մինչև ցվախճան չպակասեցաւ տուէն իր հաստատամտութեան և իր խոհեմութեան լուսաւոր օ- րինակը:


Կարգ. Գուլիէն է, որ՝ Գաղղիոյ Հանրապետութեան Նախագահ Սատի Գարնօյին տուաւ վերջին խորհուրդները, երբ նա խրախճանութեանց մէջ մատնիչ նենգութեամբ ին- կաւ գաշտահարու իր մահուան անկողնոյն վրայ տարածուած էր նա, վիրաբոյժներու անօգուտ շարչարանքները կրելով. իր շրջապատը խելոյեղ ցաւերու մատնուած էր: Լուր արուեցաւ թէ եկած է Արքեպիսկոպոսը Ս. Պիւրտոյ, գաւնառած, գոչեց. «Արհիապատի՛ւ Տէր, ի՛նչ սոսկալի բան: Աստուծոյ քահանան վեհօրէն մօտեցաւ մահամերձին անկողնոյն քով: Սատի Գարնոյ սեղանց անոր ձեռքն ու միմնջեց. «Դերապա՛ծա՛ւ, շնորհակալ եմ. տուէ՛ք ինձի Ձեր Օրհնութիւնը»: Այս ցած ձայնով պահ մը խօսակցեցաւ Արհի. Գուլիէի հետ և ընդունեցաւ Արձակուձն ու վերջին Օծումը:

Քանի մը ժամ տուաջ Սատի Գարնոյ, Վեհապետի վայել իւր փառաց լրութեան մէջ, ընդունած էր զԿարգ. Գուլիէ և ըստ սովորութեան կոչած էր զայն՝ «Պարո՛ն», սակայն ա- հեղ գերեզմանափորը դուռը կը զարնէր, և յանկարծ տեսարանը փոխուած էր: Մօրմէ ա- ռած քրիստոնեայ զգացումը յաղթական եղաւ վերջին վայրկեանին. օրհնող է Աստուած:

Անօրէններն գոչած էին իրենց արեցեցութեան մէջ. «Ո՛չ Աստուած, ո՛չ իշխնցող»: Եւ ահա խաւարի մէջ, անկրօն, անբարոյ և անգութ երիտասարդներ պատրաստեցին, աշա- կերտած խաւարասէր աղանդաց կուսակցութիւններու, և ահաւոր ոճիրներով լացուցին ու կը լացուեն մարդկութիւնը:

Էտուար Տրիւմփն կը գրէր ան ատեն. «Մտածողները պիտի տեսնեն թէ ոտոր մէջ կար անակնկալ յայտնութիւն մը այն խորհրդաւոր և աղջամղջին շարժումին որ կը ճգնէ խեղճ աշխատաւոր դատաւարգը զլիւէ հանելու՝ կուսակցական սուտամուտ երդումներով ու փայլուն խոստումներով խաբելով և օրհելով անամօթաբար. այս խեղճ մարդոց սրտէն հա- նեցին ամէն գողափարական, ամէն յոյս, ամէն հաւատք ուսանց կարենալու սալ անոնց ի փոխարէն նոյնիսկ անցաւոր նիւթական երջանկութիւնը»:

Պատմութեան այս ահաւոր դէպքերէն և անկրօնութեան անօգուտ փորձերէն պէտք է վերջապէս խրատուիլ. յետին յոյսն, փրկութիւնն ու երջանկութիւն կրօնքէն է:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Գեր. Պօղոս Գերպ. Կաղրիկեան իր կախակայութեան համար գիմեց առ Ամեն. և Կերերջանիկ Հոգեւոր Տէր և ներումն խնդրեց և իր հպատակութեան ի նշան իր հետեւ- եալ ձեռագիր յայտարարութիւնը յանձնեց անոր և կախակայութիւնը վերցուեցաւ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Եւ ստորագրեալս ներկայ պատգամական գրութեամբ կը յայտարարւմ թէ՝ ինչպէս որ պէտք է Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ մէջ, Սրբազան Քահանայապետին ամէն հրամաններուն եւ ակնարկներուն կատարելապէս հնազանդ պիտի ըլլամ, առանց ո՛ր եւ է բնադատու- քեան եւ ամենայն եռանդեամբ պատշաճ պիտի կենամ Կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբունք- ներուն եւ կանոնաց:

Նոյնպէս Ս. Աթոռէն ճանցցուած Եկեղեցական Պետեւո հետ հպատակութեամբ եւ արգամօք պիտի վարուիմ. առանց բնադատելու եւ վարկաբեկելու զիրենց: Դարձեալ կը

յայտարարեմ թէ Ս. Աթոռէն բանադրուած ու հերձուածող հրատարակուած անձանց եւ անոնց գաղափարակիցներուն հետ համամիտ չլինելու իրաւունքը եւ մեծամեծ չլինելու եւ երբեք հարկ չլինելու անոնց հետ հաղորդակցութեան չլինելու մտնելու եւ երբեք հարկ չլինելու անոնց հետ խօսակցիլ, պիտի հասկցնեմ անոնց իրենց մոլորեալ վիճակը:

Վերջապէս խօսեմ եւ օրինակաւ իբրեւ հեմարիտ կաթողիկէ Բանանայ պիտի վարուիմ եւ առ օրհնաւոր իշխանութիւնն հպատակութեան եւ յարգանաց չլսողութեան պիտի աշխատեմ ներքեւի հաւատարմութեան: Եւ կ'ուզեմ որ իմ սպա յայտարարութիւնս հրատարակուի կաթողիկոսարանի պատշտական թերթին մէջ:

Յորոգ ՚ի հաւատս կ'ստորագրեմ:

Կ, Պոլիս, Բերա 11/24 Սեպտեմբեր 1912

(Ստորագրեալ) ՊՕԳՈՍ ԳԵՐ. ԿԱԶՐԻԿԵԱՆ,

*. Վիեննայի Համաժողովին ներկայ եղող մեր երկու եպիսկոպոսներ, Արհի. Գոյունեան Պետրոս Արք. և Իսրայէլեան Ստեփան Եպս. իրենց հիւրամեծարն եղող Պարոն և Պարոնէն Պիտրմանի տպարանքին մէջ արտաքույ կարգի պատիւներու արժանացան Կոստանտնուպոլիսի Պարոն արք. Պէքի հետ ճաշեցին: Նոյնպէս շատ մեծ պատուով ընդունուեցան Քահանայապետական պատգարակին կողմանէ, ինչպէս նաեւ ներկայ եղող շատ մը բարձրաստիճան եկեղեցական պետերէն: Սեպտ. 11 ին Ամօֆ եկեղեցւոյն մէջ հայկական ձայնաւոր պատարագ մատուց Արհի. Գրիգոր Արքեպս. Գովրիկեան, Արք. Ն. Ն. Միխիլ. Վիեննայ, մասնաւոր Օրէնտալոյժ. հինգ հարիւրէ աւելի քահանայք և տաս հազարէ աւելի ժողովուրդ լեցուցած էին արամիայրը: Աւետարանէն վերջը Արհի. Իսրայէլեան եպ. Լատիններէն ճառ մը արտասանեց, ներկայ էին նաեւ բազմաթիւ եպիսկոպոսներ եւ նաեւ կարգ. Պառլէմէն Ունիւզիքը գործադիր և ուղարկող կը լսէին հայ Եպս. մը. օրով թերթերու խմբագիրներ պրիւսկիացի կ'օրինակէին հրատարակելու համար ամբողջութեամբ: Յետոյ կենսապարտական տեղեկութիւններ խորհած են մեր Շնորհալոյսն, Լամբրոնացւոյն, Յովհան Մանդակունայ, և մեր ուրիշ Ս. Հարց վրայօք, զորս ճառախօս Եպս. յիշած էր: Երկու եպիսկոպոսներն ալ ներկայ գտնուած են արքունեաց մէջ համարէն եպիսկոպոսաց Կոստանտնուպոլիսի ընդունելութեան պահուն և մեծարանաց արժանացած, որմէ ետքը փառաւոր Պիւֆէ մը արտաւած է հան: Նոյնպէս Վիեննայի Քաղաքապետը զրկած է իրենց մի մի յիշատակ Միտայ առանձինն նամակներով: Հսկայ թափօրին օրը արքայական Պալատին Կալա չքաւաքերուն մէջ տեղ որդուած էր իրենց համար:

Իսկ համաժողովին վերջը Պ. Պիտերման ստիպեց զիրենք հիւր մնալ իրեն գեռ քանի մը օր ևս, և տարաւ իւր Շաքո-Վիլլա ամարանաց-Դիւսկը (Schloss Laxenburg), արքայապետի կայան մը, ուր անցուցին քանի մը օր:

Հայ Կաթողիկէիցս՝ ինչպէս նաեւ ի մասնաւորի մեր Ամենայ. և Գերեջ. Հոգեւոր Տեառն համար այդ պատուաւոր ընդունելութիւնն Աւետարանական Ուսումնին մէջ յիշուած ամենամեծ միջնորդութիւնն է:

*. Արհի. Պետրոս Արք. Գոյունեան, որ վերջերս Հռոմէն ի Վիեննա ուղեւորած էր Ս. Հաղորդութեան Համաժողովին մէջ իբր Կաթողիկոսական նուիրակ, այս օրերս վերադարձաւ ի Հռոմ:

*. Նոյնպէս Արհի. Իսրայէլեան Եպս. Վիեննայէն դարձաւ ի Կ. Պոլիս, ուր քանի մը օր մնալէ յետոյ պիտի վերադառնայ իր թեմն՝ Խարբուլ:

*. Ազատարարի մէջ կը կարդանք.

Ո՞Վ Ի ԳԵՂԱՆՃԵԱՆ ՅԱՆՆԱ Է՞՞՞

«Տիգրանակերտէն Ջաւէն Եպս. կը գրած է խժդու զպանութիւնը Տիգրանակերտի երեւելիներէն Գաղաղեան Յաննա Էֆ.ին: Այդ հեռագիրը հրատարակեցինք երէկ: Ա. էջին մէջ ի Այդ առթիւ կը հրատարակենք իրազեկ աշխատակցի մը հետեւեալ ծանօթութիւնները՝ այդ անձին նկատմամբ:

Այս պանութիւնը անոնցմէ չէ որոնք փամփուկաւոր մոսպլութիւն կը բերեն մեր ճակտին ու կ'անցնին. սխալմամբ ջարդերուն մէջ միակն է թերեւս, որ պէտք է յազէ ամէն մարդու սիրտ, խորհելով որ Գաղաղեան գերդաստանը միակ ընտանիքն է Տիգրանակերտի մէջ որ եղած է պատկառաղեցեկ, թուրք ու քիւրտ տորքին տաջեւ, ինչպէս նաեւ, կառավարութեան աչքին, որոնք հայ ժողովուրդին ներկայացուցիչը կը համարեն գայն:

Զիս հետաքրքրողը այդ գերդաստանի հարստութիւնը, քսանէ աւելի գիւղեր և ընդարձակ կալուածներ ունենալու պարագան չէ. տարբեր խնդիր է թէ այդ պարագան ամենամեծ պատճառն է այս փայրագ և գաղանային սպանութեան:

Արժէքաւորը այն պարագան է՝ որ Դադազեան ընտանիքը թուրքերու աչքին միակ սիւնն է սեպուած Հայութեան, և սկսեալ Համիտի օրերէն մինչեւ առջի օրուան Ողջ. Ժողովի հակայ բողոքի վայրկեանը, Տիգրանակերտի թուրք տարրը ու շրջակայ գիւղերու ամենակարող աշխրէթները ամէն անգամ որ ուզէր են նոր հարուած մը տալ հայ տառապող ժողովուրդին, իրենց աչքին առջեւ յցուած է այդ ընտանիքը, իր ազդեցութեամբ, իր հարստութեամբ, իր հայ ժողովուրդին հանդէպ ունեցած անկեղծութեամբ — ինչ որ կը պակսի բոլոր հարուստներուն քով:

Յճի ջարդերը վկայ են այս խօսքերուն. քիւրտ ու թուրք խուժանք իր բոլոր ժահրը թափեց այդ գերդաստանին վրայ՝ ոչնչացնելու համար զայն, մինչդեռ ան՝ այդ գերդաստանը՝ հրապարակ եկաւ հայ ժողովուրդին մէջ, խրախուսելու, քաջալերելու ինքնապաշտպանութեան դիմող խումբ մը երիտասարդները. ան չինայեց ու է միջոց ջարդերէն վերջն ալ կանգնեցնելու համար աւերուած օճախները: Իբրեւ հայ-կաթողիկ, անոնք միակ և գերազանցօրէն մաքուր տարրը եղած են, Լուսաւորչական և Կաթողիկ յարանուանութիւններուն մէջ եղբայրական գաւազնուրոտ յարաբերութիւններ մշակելով. իրենցն է պատիւը Տիգրանակերտի հայ կաթողիկ եկեղեցիի և դպրոցի պաշտառութեան, իրենց անձնական ջանքերով և միջոցներով կառուցուած են անոնք: Ահա՛ թէ ինչո՞ւ փայրագ խուժանք նախ իր թուևային գնդակը կ'ուղղէ այդ տունին հիմերուն, Հոգային խնդիր, Հայութեան գոյութեան խնդիր, հայ գիւղացիութեան իրաւունքի խնդիր, բոլորը մարմնացած տեսած են անոնց այդ գերդաստանին մէջ, և այդ գերդաստանը ամենէն ուժեղ, տարիքով ամենէն ուժեղ, տարիքով ամենէն մեծ և աչքառու անդամին Յաննա էֆ.ին կուտան տուային հարուածը: Այս միջոցով անոնք անտէր անտէրունջ թողուցին ընդարձակ հողեր, ամէն աշխրէթագետի նախանձը շարժող հարստութիւններ: Անտէր կը մնան ուրեմն և քսանէ աւելի գիւղերու գիւղացի երկրագործները, որոնք կը ստիպուին երթալ դարձեալ քիւրտ ու թուրք պէկերու ճորտութիւն ընելու: Մէկ հարուածով ոչնչացան ուրեմն հարիւրաւոր թշուառ գիւղացի ընտանիքները:

«Օգնութիւն» կ'աղաղակէ Տիգրանակերտի տառնորդը, այլևս ո՛չ մէկ Հայ այդ քաղաքին մէջ կրնայ վատահիլ իր կեանքին վրայ, ո՛չ մէկ հայ մայր կրնայ վատահիլ իր պատուին վրայ, և այս սպանութիւնը առաջին ազդանշանն է անոր, թո՛ղ խնդայ կառավարութիւնը ու հերքումներ թող դրկէ ասկէ վերջ ալ...»

Չմոռնամ ըսելու որ Յաննա էֆ. միակ Հայն էր որուն երեսփոխան ըլլալու հաւանականութիւնը կար այս անգամ: Ահա պարագայ մըն ալ որ թերեւս պատճառ դարձած է այս ահուկի ոճիրին:

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՅԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ. Կ'իմանանք թէ Պոլսոյ մէջ գտնուող Տիգրակերտցի վաճառականներ, ուսանողներ և պաշտօնեաներ երէկ Դադազեան էֆ.ի սպանման առթիւ՝ բողոքի և ցուակցութեան երկար հեռագիր մը ուղղած են Դադազեան գերդաստանի և Զուէն Եպ.ի հասցեին:

~*~*~*~

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ներքին գանձանքերու մէջ Հայոց դէմ գործուած խժդժական ոճիրներուն անընդհատ շարունակութիւնը, աղգային կեանքին մէջ տրտական յուզում մը յառաջ բերաւ, և յանգեցաւ Ազգ. Ժողովին այնպիսի ձեռնարկներուն որոնց նմանը ցարդ շատ քիչ անգամ տեսնուած է: Ամսոյ 6 թուականաւ քանի մը նոր հեռագիրներ հասած էին ի Պատրիարքարան Գում Գարուի, որոնց մէջ Բազէլի, Մշոյ, Տիգրանակերտի մէջ և այլուր ի նորոյ պատահած այլեւայլ սպանութեանց և եղեռնագործութեանց գոյժը կը տրուէր: Պատրիարքը՝ Արշարունի սրբազան, արտաստփոր կերպով յուզուեցաւ այս նոր յայտնութիւններու առջև, և յուսահատական միջոց մը ձեռք առաւ: Անցեալ Ուրբաթ աւուր տղգ. Ժողովի նիստը յաւէտ յիշատակելի պիտի մնայ: Պատրիարքը նախապէս պատրաստուած գիւրը, զոր պիտի կարդար ժողովին առջև, կը պատռէ և հրաման կ'ընէ որ անմիջապէս պատրաստուի իր հրաժարագիրը: Նոյնպէս Քաղաքական ժողովն ալ, վերահասու ըլլալով խնդրոյն առած ձեւին, համաձայն կ'ըլլայ Պատրիարքին, և ինքն ալ կու տայ իր հրաժարականը:

Պատրիարքը իր հրաժարագրին մէջ կը յիշէ հին հարստահարութիւնները, Ատանայի ահաւոր կոտորածը, սահմանագրութեան ներշնչած վատահալութիւնէն ալ յուսախաբութիւնը, հայաբնակ գաւառաց մէջ մարդկային երեք անբռնաբարելի իրաւունց՝ այս է կենաց, ընչ չից և պատուի կատարելով անապահովութիւնը, կը յիշէ նոյնպէս թէ՛ եղած դիմումներու վրայ կառավարութիւնը շարունակ խոստումներ ըրած էին, որոնք ընտ չիրականացան, թէ՛ նոր դիմում եղաւ 1912 Փետր. 14ին: Եւ կը յարէ:

«Բ. Դրան ընդարձակ յիշատակագիր մը մատուցանելով եւ պարզելով մի առ մի ոնիրներու, կեդեմութեան, յաճեսակութեանց, բռնազրոյի կրօնափոխութեանց նոյնիսկ անշարժաններու եւ վերջապէս ամէն տեսակ բռնութեանց, եւ պատժական անհրաժեշտանք եւ զեղծումներու դէպքեր որ ի գործ կը դրուին հայ ժողովրդեան վրայ, որ երկրին զարգացման եւ հայ անկրթութեան մէկ կարեւոր սարքը աւ նոյն իսկ ազգակը եղած է: Եւ սակայն կը հալածուի ու կը հանդիմանայ անկրթութեան, որ երկիրը բար ու բանկ կ'ընեն, եւ անոր ապագան ու նոյնիսկ տեւական զերազոյն շահերը կը վստահեն: Այս անգամ տեւական կողմէ եղած խոստումն աւելի գործնական ձեւ մը ունէին, այն է յիսկոր յանձնաժողով մը կարգել ամէն ինչ տեղոյն վրայ կենելու եւ ի գործ դնելու համար արդարութիւնը... Խնդիրն այս վիճակին մէջ կը գտնուէր երբ երեքշաբթի կառավարական մէկ նոր պատժական յայտարարութիւն, որ տեսակ մը հերքում էր եղելութեանց, վստահ եւ թաղեփ կուսակալութիւններու վրայ հիմնուած: Հերքում՝ զոր մենք ալ հերքեցինք մեր կարգին, յատուկ քաղաքով եւ մի առ մի մէջսեղ ղեկելով բոլոր եղելութիւնները, խնդիրներու զարաւակնելու պատժականներէ, հերքելը հին դրութեան մէկ նշանակ է եւ վերջ մտնելու կը ծառայէ:

Յետոյ կը թուէ նոր աղետալ դէպքերը, զոր ի վեր անդը յիշատակեցինք. և կը յարէ նաեւ թէ Էջմիածնի կաթողիկոսը խորապէս զգածուելով հրամայած էր իրեն փութով տեղեկութիւն տալ իրաց վիճակին վրայ, զոր կատարած է հետագայում և մասնաւոր տեղեկագրով: Բայց քոս որում Ն. Վեհափառութիւնը իր հայր հաւատարակաց կը պահանջէ մեզմէ ապահովել իր հին տեղաբնակները, եւ մեր միջոցները տպւեա անգոր կը մնան փափաքուած արդիւնքի առաջ թերելու, քոս որում Ն. Վեհափառութիւնը իր բարձր դիրքով, պատժական յարաբերութիւններով եւ ընդհանուր կացութեան զիսկապէս կապարկեալ կատարեալապէս ի վիճակի կը գտնուի ցոյց տալու այն ուղղութիւնը որոց հետեւի կը հայտնաւորուի իրաց ելք մը գտնելու եւ ազգին էութիւնը պահպանելու այն անողորմելի ծրագրին դէմ՝ որ կը ձգտի այսին չեղանելու, ուստի խնդրեցինք Ն. Վեհափառութեանն որ շուտով ընէ տալ իր հրահանգները:

Եւ ապա ստացաւ կը վերջացնէր Պատրիարքը իւր հրաժարագիրը: «Առդ, նկատելով որ տարւոյ Յուլի 12էն ի վեր մեծական կերպով եղեռներ կը գործուին հայ ժողովրդի նահանգաց մէջ եւ մեր բազմաթիւ դիմումներն ու քախանդանքներն մնայով ապարդիւն՝ շարադրածներ չեն ձեռնարկուիլ ու պատժուիլ, այլ ընդհանրապէս անարդարութիւն կը գրեւնեն տեղական պատժական անարդարութեան — յոսեմք գալսեմք համամատնութեան ու մեղաւորութեան — շուտով, շուտով անհաշտուելու նորանոր նիւթեր, խնդրում խուժանի մը գլուխը տնկած: Նկատելով որ Հայ ժողովուրդը անգէն անպատշաճ կը գտնուի պիտուած աւազակներու առջեւ, խաղաղիք բոլորում անոնց մոլեռանդական վայրագ կից, որ դեռ ծաւալը կ'զգան իրենց երբեմնի կոտորածներն ու աւարաւորութիւններն շարունակելու:

Նկատելով որ այլ զոմարակ կացութիւնը զմեզ պատասխանատուութեան կ'ենթարկէ առաջը Ազգին, Պատ. Ժողովիդ եւ գերագոյն հոգեւոր պետին՝ ամենայն Հայոց Հայրապետին: Նկատելով նաեւ որ բովանդակ մերագեղեցիկ կողմէ որ ի սփիւռս աշխարհի հեզհեռէ բոլորի բուն աւարաւորութիւններ տեղի կ'ունենան, յուզուի կը ծաւալի եւ իրաց վիճակը սակաւ ծանրակեփու ու փափուկ նանգ մամբ մը կ'առնու, խղիւղ խաղը կը զգամ մնայու այլեւս պատրաստական արքունի վրայ այնպիսի պարագայից մէջ, ուր կարելի չի լինիր մեր պատժին էն էական պատրաստութիւնը կատարել եւ կուզանք մեր նախնական մատուցանելու Պատ. Ժողովիդ, եւ իր ներկայացուցիչ Թուրքիոյ Հայոց, անոր յուրջ ուշադրութեան յանձնելու ներկայ դառնալին եւ սպառնալից կացութիւնը: Մարդիկ որ չեն գերաց Նախախնամողն ինքն պատշաճ եւ գորաւիկ լինի մեր մատչելի ժողովրդեան, կը մայրենք նաեւ որ կար եւ գորութիւն շնորհէ Ազգ. Ժողովիդ եւ դիւրացնէ ու բեզմաւորէ անոր ծանր ու քախմալից աշխատութիւնը:»

Ազգ. Ժողովին մէջ այս հրաժարագրին ընթերցումէն վերջը, դարձուրելի վիճարաւորութիւններ տեղի ունեցան: Եւստի բնաւարտեցին կառավարութիւնն ու խօսեցան՝ Բաշաբան, Վարդգէս, Համբարձում Պոյաճեան, Բ. Զարգարեան, եւս. Շառտերը կը կրկնէին թէ Ժողովուրդը պէտք է դիմէ ինքնապաշտպանութեան՝ Բիւրոսերու յարձակումներուն դէմ. քանի որ անօգուտ է այլ ևս կառավարութեանն պաշտպանութիւն յուսալը: Երկար վիճարկումներէ վերջը, քու էտրիկաւ բունաճեալ մը Ժողովը ճի գէմ 41 ձայնով կ'ընդունէր Բազ. Ժողովի հրաժարագիրը, և ըստ օրինի Ատենայեանոց Դիւանին կը յղէր Ս. Պատրիարքին հրաժարագիրը:

* ՀՐԱՌԱՐՈՒՄՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Ձեռնհաս շրջանակներու մէջ կը հաստատուի որ Պատրիարքի և Պաշտպան Ժողովի հրաժարումը բաւական մեծ ազդեցութիւն գործած է կառավարութեան վրայ, կ'ընէ Մօլիթոն:

ԲԻՎ. Ա. Ն. Դ. Ա. Ո. Ի. Թ. Ի. Ն.

Իմաստութեան սկզբանց վրայ	529
Վիեննայի Ս. Հաղորդութեան Համագրային Համաժողովը	535
Մարդկութեան փառքերը	538
Տեղեկագրական	526

ԱՐՏՈՒՄՆԵՐ

ՅՈՎ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԵՆ-ԻՄԱՐԱԳՐԱՊԵՏ

ԳԵՌԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարան
 պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
 սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր հօշոյք բաղկացած եւ
 ճոխ բովանդակութեամբ, ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
 մը, որ կը պարունակէ կարեւոր եւ տնայ առկա լուրերն՝ համառոտ-
 րաւ . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
 մանաւանդ որոնք յառաջանալ ժամանակ չունին օրաբեր կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ. ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ հալաւ .

Տարեկան Դնեկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին *Maisa-Rousso* եւ
 կամ մէկ մէկ դրանց նամակագրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ . յօդուած . եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին .

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Քերտ, Պայրան փողոց Թիւ 5

Կ. Պոլիս

Katoghiké Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
 2.— Խմբագրութիւնն պատշաւորեալ չէ անպատշաւ կամ նոյնաբեամբ
 հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
 3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
 4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան բուրձին մէկ
 կողմը վիայն:
 5.— Ծանուցմանց համալուստեալն պայմանագրութիւնք կրկնաթուղիք: